ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՐԱՖՖԻ ԱՇՈՏԻ

ԻՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՋԱՐԱԿԱՆ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՔ ՏԻՐԱԿԱԼՆԵՐԻ ՕՐՈՔ (1796-1848թթ.)

Է.00.02-<<Համաշխարհային պատմություն>> մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2012

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների թեկնածու
Մարկարյան Ս. Ա.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր
Մուրադյան Մ. Ա.

պատմական գիտությունների թեկնածու
Կոստիկյան Ք. Պ.

Առաջատար կազմակերպություն Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2012 թ. հուլիսի 17-ին, ժ. 13^{00}-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006 <<Համաշխարհային պատմություն>> մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մ. Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012 թ. հունիսի 14-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու Ղազարյան Ռ. Պ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Վերջին երկու հարյուրամյակում Իրանը մշտապես գտնվել է տարածաշրջանային զարգացումների կենտրոնում և ունեցել է իր դերակատարությունը ծավալվող աշխարհաքաղաքական գործընթացներում: Եթե 20-րդ դարում հետաքրքրությունը Իրանի շուրջ աճեց կապված նրա էներգետիկ պաշարների հետ, ապա 19-րդ դարում Իրանն առաջին հերթին ուներ ռազմավարական նշանակություն եվրոպական տերությունների համար, որոնք, պայքարելով միմյանց դեմ, ցանկանում էին ամրապնդել իրենց դիրքերն Իրանում: Թեև Իրանի արտաքին քաղաքականության և ընդհանրապես տվյալ ժամանակաշրջանի վերաբերյալ բավականին ուսումնասիրություններ են կատարվել, սակայն այժմ կրկին անհրաժեշտություն է ծագել համակողմանի կերպով անդրադառնալու տվյալ նյութին, քանի որ եղած աշխատությունների մեծ մասը ներկայացնում է պատմական իրողություններն այն լույսի ներքո, որը հարմար է եղել հեղինակին, հասարակարգին կամ էլ գրվելու ժամանակաշրջանին: Վերջին շրջանում, աշխարհաքաղաքական զարգացումներին և Իրանի ու ԱՄՆ-ի տարաձայնություններին զուգահեռ, տեսակետներ են հնչում, որ Իրանի որոշ շրջաններ պետք է անջատվեն Իրանից կամ ինքնավարություն ստանան: Այս տեսակետները հիմնավորվում են այն պնդումներով, որ տվյալ շրջաններն իբրև թե պատմականորեն բռնի կերպով են միավորվել Իրանին և այժմ անհրաժեշտ է վերանայել պատմական փաստերն ու նույնիսկ նոր գնահատականներ տալ մի շարք պատմական պայմանագրերի: Այս առումով հատկանշական է Ադրբեջանի գործելակերպը, որն առաջ է քաշում Հյուսիսային և Հարավային Ատրպատականների գաղափարը և հավակնություններ է ներկայացնում Իրանի պատմական տարածքների նկատմամբ: Այս նկրտումները ոչ միայն զուրկ են իրավական հիմքերից, այլև խեղաթյուրում են պատմական փաստերը, քանի որ Ատրպատականը երբեք էլ չի բաժանվել հյուսիսային կամ հարավային մասերի: Այս բաժանումն ի հայտ է եկել ռուս-պարսկական պատերազմների արդյունքում:

21-րդ դարում, ինչպես գիտենք, պետությունները պայքարում են միմյանց դեմ ոչ միայն զենքով և ռազմական դաշտերում, այլև տեղեկատվությամբ և հասարակական կարծիքի ձևավորմամբ: Կարծում ենք, որ անհրաժեշտ է պաշտպանել իրական պատմական փաստերը և տեղ չտալ ապատեղեկատվությանն ու պատմական խեղաթյուրումներին: Այս առումով, կարելի է ասել, որ ներկայումս պատմական հիմքերի ուսումնասիրումը և անաչառ լուսաբանումը ապահովում է պատմության հետագա զարգացումը:

Վերհանելով պատմական փաստերը և մանրամասն քննության ենթարկելով դրանք՝ պարզ են դառնում մի շարք ընդհանրություններ 19-րդ

դարում Իրանի շուրջ ծավալվող իրադարձությունների և ներկա զարգացումների միջև: Անգլիան, դրսևորելով երկակի քաղաքականություն, մի կողմից դաշնակցում էր Ռուսաստանի հետ և պայքար էր մղում Նապոլեոնի դեմ, մյուս կողմից հրահրում էր Իրանին պատերազմել Ռուսաստանի դեմ՝ հետապնդելով երկու նպատակ. թուլացնել Ռուսաստանը և կախվածության մեջ պահել Իրանը: Իրանի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունը եվրոպական տերությունների միջև խուսավարելու և նրանց միջև գոյություն ունեցող խնդիրները միմյանց հակադրելու քաղաքականությունն էր:

Մենք փորձել ենք անդրադառնալ դիվանագիտական պայքարի թեմային և ներկայացնել Իրանի փորձերը՝ կառուցելու իր ինքնուրույն արտաքին քաղաքականությունը 19-րդ դարի առաջին կեսին: Այսօր դա արդիական է այն առումով, որ մեծ տերությունները տարբեր պատճառներով խոչընդոտում են Իրանին իր ինքնուրույն արտաքին քաղաքականության ոլորտում: Հասկանալով պատմական հիմքերը և Իրանի դերը Անգլիա-Ռուսաստան հակամարտության համատեքստում՝ ակնհայտ է դառնում, որ ինչպես երկու դար առաջ, այնպես էլ հիմա Իրանի կարևորությունը ոչ միայն չի նվազել, այլև էլ ավելի առանցքային նշանակություն է ստանում ներկայիս աշխարհաքաղաքական զարգացումներում: Ուղղակի Անգլիայի փոխարեն, որը 19-րդ դարում հավակնում էր գերտերություն կարգավիճակին, այժմ այդ դերին է հավակնում ԱՄՆ-ը:

Ատենախոսության խնդիրներն ու նպատակները: Նախաձեռնելով այս թեմայի ուսումնասիրությունը՝ մեր առաջ նպատակ ենք ունեցել վերհանել և լուսաբանել.

. Աշխարհաքաղաքական իրավիճակը 18-րդ դարի վերջում և 19-րդ դարի սկզբում, Իրանի տարածաշրջանային դերն ու նշանակությունը:

. Իրանի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները, որոնք էին խուսավարելու (лавирование) կոնցեպցիան և հակամարտող եվրոպական տերությունների միջև առկա խնդիրների հակադրումը միմյանց:

. Ղաջարական դինաստիայի առաջին երեք տիրակալների կառավարման շրջանում արձանագրված ձեռքբերումները և թույլ տրված սխալներն Իրանի արտաքին քաղաքականության ոլորտում:

. Եվրոպական տերությունների վարած քաղաքականությունն Իրանում, 19-րդ դարի առաջին կեսին Իրանի հետ կնքված միջազգային պայմանագրերի վերլուծությունը:

. Թեմային առնչվող տարատեսակ կարծիքներն ու եղած գրականությունը, վերլուծել և քննել աղբյուրագիտության մեջ եղած հակասությունները:

Ատենախոսության գիտական նորույթը: Թեմայի գիտական նորույթն այն է, որ աշխատանքում փորձ է արվել բացահայտել Իրանի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները, որոնք էին՝ խուսավարելու (лавирование) կոնցեպցիան և հակամարտող եվրոպական տերությունների միջև առկա խնդիրների հակադրումը միմյանց, ինչպես նաև ի մի բերել տարբեր արևելագիտական դպրոցների տեսակետները, որոնք գոյություն ունեն 19-րդ դարի առաջին կեսի Իրանի արտաքին քաղաքականության վերաբերյալ: Առաջին երեք դաջարական տիրակալները մտահոգված էին տարածաշրջանում Իրանի դերի և նշանակության վերականգնման հարցով և թեկուզ մենք չենք տեսնում նրանց գործողություններում որևէ կոնկրետ մտածված կոնցեպցիա միջազգային ասպարեզում, ամեն դեպքում, պետք է նշել, որ Իրանի պետական գործիչները փորձում էին պահպանել իրենց ազգային շահերը՝ եվրոպական տերությունների միջև գոյություն ունեցող խնդիրները հակադրելով միմյանց:

Օգտագործված աղբյուրների համառոտ տեսություն: Թեմայի շարադրման համար օգտագործված նյութերը կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի. արխիվային սկզբնաղբյուրներ՝ փաստաթղթեր, վավերագրեր, և տպագիր սկզբնաղբյուրներ:

Արխիվային սկզբնաղբյուրները վեր են հանվել Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ֆոնդերից: Անդրադարձ է կատարվել կաթողիկոսական արխիվի մասը կազմող օտարալեզու վավերագրերին, որոնք ներառում են նաև պարսից շահերի հրամաններն ու հրովարտակները: Մի շարք արժեքավոր տեղեկություններ ենք քաղել նաև ՌԴ ԱԳՆ Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվի ֆոնդերից, որոնք հիմնականում վերաբերում են ուսումնասիրվող ժամանակաշրջանի միջազգային հարաբերություններին և դիվանագիտական պայքարին:

Աշխատանքում օգտագործված են հայերեն, ռուսերեն, պարսկերեն, անգլերեն և ֆրանսերեն աղբյուրներ:

Հայերեն աղբյուրների մեջ կարևոր տեղում է գտնվում Վ. Բայբուրդյանի "Իրանի պատմություն" [1] մեծածավալ աշխատությունը: Արևելյան Հայաստանին և հայությանը վերաբերող արժեքավոր տեղեկություններ ենք քաղել Զ. Տ. Գրիգորյանի "Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և դրա պատմական նշանակությունը"[2] և Վ. Ա. Դիլոյանի "Արևելյան Հայաստանը 19-րդ դարի առաջին երեսնամյակին և հայ-

[1] Վ. Բայբուրդյան, Իրանի պատմություն, Երևան, 2006:

[2] Զ. Տ. Գրիգորյան, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և դրա պատմական նշանակությունը, Երևան, 1978:

ռուսական հարաբերությունները”[3] գրքերից: Այս աշխատություններում մանրամասն ներկայացված է Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը և հայերի ազատագրական պայքարը 19-րդ դարի առաջին երեսնամյակում, անդրադարձ է կատարված հայերի և կովկասյան տարածաշրջանի մյուս ժողովուրդների շրջանում ռուսական կողմնորոշման ձևավորման խնդրին:

Ռուսերեն գրականությունը ժամանակագրական առումով կարելի է բաժանել մի քանի խմբի՝ 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի աղբյուրներ և խորհրդային շրջանի աշխատություններ: Առաջին խմբի մեջ կարևորագույն տեղում են գտնվում “Акты, собранные Кавказской археографической комиссией”, “Утверждение Русского владычества на Кавказе”, “Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии” աշխատությունները[4], որոնք ունեն արխիվային կարևոր նշանակություն: Ժամանակաշրջանի իրադարձությունները և հատկապես ռուս-պարսկական պատերազմները ներկայացված են Վ. Պոտտոյի “Кавказская война” և Ն. Դուբրովինի “История войны и владычества русских на Кавказе” բազմահատոր աշխատություններում[5]: Ցարական շրջանի ռուսական աղբյուրները հիմնականում գրված են պաշտոնական փաստաթղթերի, նամակագրության, զեկույցների հիման վրա: Այս աշխատանքներում, բնականաբար, փորձեր են կատարվել արդարացնելու համար Ռուսաստանի նվաճողական արտաքին քաղաքականությունը: Պաշտպանելով կայսերական և գաղութատիրական գաղափարները՝ քննադատությունն այս աշխատանքներում քիչ տեղ ունի և սահմանափակվում է միայն որևէ գործչի քննադատությամբ: Ռուս պատմաբաններից միայն Մ. Ն. Պոկրովսկին է անդրադառնում Ռուսաստանի արտաքին քաղաքականությանը և մղած պատերազմներին՝ մատնանշելով դրանք որպես գաղութատիրական և նվաճողական պատերազմներ[6]:

Բացի 19-րդ դարի ռուսական աղբյուրներից աշխատանքում լայնորեն օգտագործվել են խորհրդային շրջանի մի շարք գրքեր: Կարևոր արխիվային նյութ է պարունակում “Внешняя политика России XIX-начала XX века” բազմահատոր ժողովածուն[7]: Բ. Բալայանի “Дипломатическая история русско-иранских войн и присоединение Восточной Армении к России”,

---

[3] Վ. Ա. Դիլոյան, Արևելյան Հայաստանը 19-րդ դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1989:

[4] Акты, собранные Кавказской археографической комиссией, том 1-8, Тифлись, 1866-1881; Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии, том 2, Тифлись, 1902; Утверждение Русского владычества на Кавказе, том 1, Тифлис, 1901.

[5] Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, том 5-6, Санкт-Петербург, 1887-1888; В. Потто, Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, том 2-3, СПб, 1887-1888.

[6] М. Н. Покровский, Внешняя политика, Москва,1918.

[7] Внешняя политика России XIX-начала XX века, серия 1, том 1-6, Москва, 1960-1967.

“Международные отношения Ирана в 1813-1828гг” և Մ. Իգամբերդիևի “Иран в международных отношениях первой трети XIX века” աշխատությունները[8] համակողմանի և մանրակրկիտ կերպով ներկայացնում են ռուս-պարսկական պատերազմների և դրանց միջև ընկած ժամանակաշրջանը: Ա. Հովհաննիսյանի “Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия”[9] մեծածավալ աշխատանքն ամփոփում է 19-րդ դարի վերջից մինչև Գյուլիստանի հաշտությունն ընկած շրջանը: Այստեղ բազմաթիվ տեղեկություններ ենք գտնում Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և Իրանի արտաքին քաղաքականության վերաբերյալ: Ն. Կինյապինայի “Внешняя политика России первой половины XIX века” և “Кавказ и Средняя Азия во внешней политике России” գրքերում[10] անդրադարձ է կատարվում Ռուսաստանի արտաքին քաղաքականությանը Կովկասում և Միջին Ասիայում:

Ռուս-պարսկական հարաբերությունները և հատկապես Ա. Ս. Գրիբոյեդովի ծավալած գործունեությունը ներկայացված է Բ. Բալայանի, Ի. Ենիկոլոպովի, Ս. Մարկարյանի և այլոց աշխատանքներում[11]:

19-րդ դարի 30-ականների իրադարձություններին և հատկապես Հերաթի խնդրին են վերաբերում Ս. Ռիշտիայի “Афганистан в 19-ом веке”, Գ. Ախմեդջանովի “Гератский вопрос в XIX веке”, Պ. Բուշեվի “Герат и англо-иранская война 1856-1857гг” գրքերը[12]: Հարկ ենք համարում նշել նաև Ն. Կուզնեցովայի “Иран в первой половине XIX века”, Լ. Սեմյոնովի “Россия и международные отношения на среднем востоке в 20-е годы XIX века” և Ա. Ֆադեևի “Россия и Кавказ первой трети 19-го века” աշխատությունները[13],

---

[8] Б. П. Балаян, Дипломатическая история русско-иранских войн и присоединение Восточной Армении к России, Ереван, 1988; Б. П. Балаян, Международные отношения Ирана в 1813-1828гг, Ереван, 1967; М. А. Игамбердыев, Иран в международных отношениях первой трети XIX века, Самарканд, 1961.

[9] А. Р. Иоаннисян, Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван, 1958.

[10] Н. С. Киняпина, Внешняя политика России первой половины XIX века, Москва, 1963; Н. С. Киняпина, Кавказ и Средняя Азия во внешней политике России, Москва, 1984.

[11] Б. П. Балаян, Кровь на алмазе “Шах”: Трагедия А. С. Грибоедова, Ереван, 1983; И. Ениколопов, Грибоедов и восток, Ереван, 1974; С. А. Маркарян, Гибель русской миссии в Иране и убийство А. С. Грибоедова, “Грибоедовские чтения”, вып. 1, Ереван, 2009.

[12] С. К. Риштия, Афганистан в 19-ом веке, Москва, 1958; Г. А. Ахмеджанов, Гератский вопрос в XIX веке, Ташкент, 1971; П. П. Бушев, Герат и англо-иранская война 1856-1857гг, Москва, 1959.

[13] Н. А. Кузнецова, Иран в первой половине XIX века, Москва, 1983; Л. С. Семенов, Россия и международные отношения на среднем востоке в 20-е годы XIX века, Ленинград, 1963; А. В. Фадеев, Россия и Кавказ первой трети 19-го века, Москва, 1960.

որոնք հատկապես կարևոր են, քանի որ Իրանի արտաքին քաղաքականությունը ներկայացված է եվրոպական տերությունների արևելյան քաղաքականության համատեքստում:

Ռուսաստանի և եվրոպական տերությունների տնտեսական քաղաքականությունը արևելքում, ինչպես նաև նրանց միջև առևտրային կապերի զարգացումը 19-րդ դարի սկզբին ներկայացված է Մ. Կ. Ռոժկովայի, Օ. Պ. Մարկովայի աշխատություններում[14]: Օգտագործվել է նաև խորհրդային շրջանի մի շարք այլ հեղինակների գրքեր և գիտական հոդվածներ:

Իրանական պատմագրության մեջ նույնպես բավականին աշխատություններ կան, որոնք վերաբերում են 19-րդ դարի առաջին կեսի Իրանի արտաքին քաղաքականությանը և դիվանագիտական հարաբերություններին եվրոպական տերությունների, Ռուսաստանի և Թուրքիայի հետ: Այս բոլոր աշխատանքները մեկ հիմնական ընդհանրություն ունեն: Դա այն է, որ գրված են անգլիական հեղինակների ազդեցությամբ և հիմնականում կրկնում են նրանց տեսակետները: Հիմնված լինելով արևմտյան աղբյուրագիտության վրա՝ իրանական աղբյուրներն ունեն հակառուսական դիրքորոշում: Նշելով Ռուսաստանի նվաճողական քաղաքականությունը՝ իրանցի հեղինակները հաճախ լռում են Անգլիայի և Ֆրանսիայի իրական ծրագրերի մասին և նույնիսկ փորձում են արդարացնել անգլո-իրանական անհավասար պայմանագրերը: Որոշ քննադատություն ուղղված Իրանի արտաքին քաղաքականությանը և 1814թ-ի Թեհրանի պայմանագրին, ինչպես նաև Գրիբոյեդովի սպանությանն ու Իրանը երրորդ ռուս-պարսկական պատերազմի վտանգին ենթարկելու հարցում գտնում ենք Մ. Մահմուդի "Իրանի և Անգլիայի քաղաքական հարաբերությունների պատմությունը 19-րդ դարում" և Ա. Էղբալի "Իրանի պատմություն" աշխատանքներում[15]:

Իրանական աղբյուրներից հարկ է նշել Ա. Ա. Բինայի "Իրանի քաղաքական և դիվանագիտական պատմություն", Ջ. Ղոզանլուի "Իրանի ռազմական պատմություն" և Ա. Ա. Շամիմի "Իրանը Ղաջարական տիրակալների օրոք" աշխատությունները[16]: Այս աղբյուրներին աշխատել ենք ցուցաբերել քննադատական մոտեցում, քանի որ որոշ փաստեր զգալիորեն խեղաթյուրված են և կրկնում են արևմտյան հեղինակների կարծիքները:

---

[14] М. К. Рожкова, Экономическая политика царского правительства на среднем востоке во второй четверти 19-го века и русская буржуазия, Москва-Ленинград, 1949; О. П. Маркова, Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, Москва, 1966.

[15] محمود، م.- تاریخ روابط سیاسی ایران و انگلیس در قرن نوزدهم میلادی، جلد اول، تهران، 1949/1328; اقبال، عباس- تاریخ مفاصله ایران از استیلای مغول تا انقراض قاجاریه، تهران، 1941/1320.

[16] بینا، علی اکبر- تاریخ سیاسی و دیپلماسی ایران، تهران، 1958/1337 ; قوزانلو، ج.- تاریخ نظامی ایران، تهران، 1936/1315 ; شمیم، آ.- ایران در دوره سطلنت قاجاریه، تهران، 2005/1384.

Արևմտյան աղբյուրներում՝ հատկապես անգլիական, տվյալ ժամանակաշրջանի միջազգային հարաբերությունները ներկայացված են զգալիորեն խեղաթյուրված կերպով և անգլո-ռուսական պայքարի ազդեցությամբ: Անգլիացի հեղինակները, ներկայացնելով Անգլիայի արտաքին քաղաքականությունն Իրանում և ընդհանրապես արևելքում, նշում են, թե այդ քաղաքականությունն ուղղված է եղել Իրանի անկախության պահպանմանը, իրանական ժողովրդի և մշակույթի պաշտպանությանը, ինչպես նաև Հնդկաստանի անվտանգության ապահովմանը: Այս տեսակետներն են արտահայտված Ռ. Վաթսոնի, Ջ. Քըրսոնի, Պ. Սայքսի, Ջ. Մաքնեյլի, Ջ. Քեյի, Հ. Ռուլինսոնի, Ջ. Մալքոլմի և այլոց աշխատանքներում[17]:

Ի տարբերություն անգլիական աղբյուրների, ֆրանսիացի հեղինակներն[18] այլ լույսի ներքո են ներկայացնում Իրանը և 19-րդ դարի սկզբի իրադարձությունները: Բնականաբար, հիմնական շեշտը դրվում է անգլիական նվաճողական ծրագրերի և Իրանի գաղութացմանն ուղղված քաղաքականության վրա:

Արևմտյան աղբյուրներից հատկապես կարևոր են 19-րդ դարի այն աշխատությունները, որոնք գրված են տվյալ պատմական ժամանակաշրջանում և պատմական իրադարձությունների մասնակիցների կողմից: Դրանք նույնպես ունեն կարևոր արխիվային նշանակություն և բազմակողմանի տեղեկություններ են հաղորդում ոչ միայն Իրանի, այլև հարևան երկրների տնտեսական և քաղաքական կյանքի վերաբերյալ: Այս աշխատությունների թվին կարելի է դասել անգլիացիաներ Քոնոլլիի, Մորիերի, ինչպես նաև ֆրանսիացի հեղինակներ Բելանժեի, Ֆոնտանյեի, Ժոբերի, Դրուվիլի հեղինակած գրքերը[19]:

---

[17] R. G. Watson, A history of Persia, from the beginning of the 19-th century to the year 1858, London, 1866; G. N. Curson, The Persia and the Persian Question, vol. 2, London, 1892; P. Sykes, A history of Persia, vol. 2, London, 1851; J. Mc Neill, Progress and present position of Russia in the East, London, 1836; J. W. Kaye, History of the War in Afganistan, vol. 1, London, 1890; H. Rawlinson, England and Russia in the East, London, 1875; J. Malcolm, The history of Persia, London, 1827.

[18] E. Driault, La politique orientale de Napoleon, Paris, 1904; Mission du general Gardane en Perse sous le Premier Empire. Documents historiques publies par son fils le Cte Alfred de Gardane, Paris, 1865.

[19] A. Conolly, Journey to the North of India, overland through Russia and Afganistan, vol. 1, London, 1838; J. Morier, A second journey through Persia, Armenia and Asia Minor to Constantinople, between the years 1810 and 1816, London, 1818; Ch. Belanger, Voyage aux Indes-Orientales, t. 2, Paris, 1852; V. Fontanier, Voyage en Orient entrepris par ordre du Gouvernement francais, de l'ane'e 1821 a' l'ane'e 1829, Paris; 1836; P. A. Joubert, Voyage en Armenie et en Perse, Paris, 1821; G. Drouville, Voyage en Perse fait en 1812 et 1813., t. 1, Paris, 1828.

Ատենախոսության ժամանակագրական շրջանակները: Ատենախոսության բուն շարադրանքը ներառում է 18-րդ դարի վերջից մինչև Մոհամմադ շահի իշխանության ավարտն ընկած ժամանակահատվածը՝ ավելի կոնկրետ՝ 1796-1848թթ.: Միևնույն ժամանակ մեր կողմից ուսումնասիրվող հիմնահարցերի սկզբնավորման պատմաքաղաքական ակունքների և հետագա իրադարձությունների զարգացման մասին ավելի հստակ ու ամբողջական պատկերացում կազմելու համար նպատակահարմար ենք գտել անդրադառնալ նաև նշված ժամանակահատվածից դուրս գտնվող որոշ իրադարձությունների:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Աշխատանքի մեթոդաբանական հիմքում ընկած է աղբյուրագիտական նյութի քննական վերլուծությունն ու փաստերի համեմատական-համադրման ուսումնասիրությունը: Ատենախոսությունը շարադրելիս աշխատել ենք զերծ մնալ գաղափարախոսական կաղապարներից՝ որպես չափանիշ հիմք ընդունելով պատմական ճշմարտությունը և անաչառությունը: Աշխատանքը շարադրելիս օգտվել ենք տարբեր, երբեմն նաև իրար հակասող աղբյուրներից: Միաժամանակ սկզբնաղբյուրների և այլ նյութերի նկատմամբ հանդես ենք բերել քննադական, վերլուծական մոտեցումներ:

Աշխատանքի կիրառական նշանակությունը: Ատենախոսության որոշ հատվածներից կարող են օգտվել Իրանի արտաքին քաղաքականության պատմությունն ուսումնասիրող անձինք: Աշխատանքի մեջ առաջ քաշված եզրահանգումներն ու մեկնաբանությունները կարող են օգտակար լինել բուհերում Իրանի պատմություն առարկայի դասավանդման ընթացքում: Ատենախոսության թեման կարող է դիտարկվել որպես օգտակար նյութ նաև միջազգային հարաբերություններ և համաշխարհային պատմություն առարկաների դասավանդման ժամանակ:

Աշխատանքի փորձաքննությունը և պաշտոնական հավանությունը: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի Իրանագիտության ամբիոնում: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները լուսաբանվել են մեր կողմից հրապարակված գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և համառոտ բովանդակությունը: Աշխատանքը բաղկացած է առաջաբանից, չորս գլխից, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից: Գլուխներն իրենց հերթին բաժանված են ենթագլուխների:

Առաջաբան: Այստեղ ներկայացվում է թեմայի արդիականությունը, ատենախոսության խնդիրներն ու նպատակները, աշխատանքի գիտական նորույթը, ժամանակագրական սահմանները, մեթոդաբանական հիմքը, կիրառական նշանակությունը, ինչպես նաև օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսությունը:

Գլուխ առաջին: ***<<Ղաջարական պետության հիմնադրումը և միջազգային իրադրությունը 18-րդ դարի վերջում և 19-րդ դարի սկզբում>>***: Առաջին գլխում ամփոփված է 18-րդ դարի երկրորդ կեսից մինչև մինչև 19-րդ դարի սկիզբն ընկած ժամանակահատվածը: Ներկայացվում է Իրանում ստեղծված իրավիճակը 18-րդ դարի երկրորդ կեսին և Ղաջարական պետության հիմնադրումը, ինչպես նաև միջազգային իրադրությունը և եվրոպական տերությունների պայքարը 19-րդ դարի սկզբում: Գլուխը բաժանված է երեք ենթագլխի:

Առաջին գլխի առաջին ենթագլուխ: <<Իրանի ներքին դրությունը 18-րդ դարի 2-րդ կեսին և Ղաջարների պայքարը իշխանության համար>>: Ներկայացվում է Իրանի ներքին դրությունը 18-րդ դարի երկրորդ կեսին և Ղաջարական ցեղախմբի պայքարն իշխանության համար: 1747թ-ից Իրանում տիրող գահակալական պայքարում հաղթող են դուրս գալիս Զանդերը, իսկ նրանց առաջնորդ Քարիմ խան Զանդը ստանձնում է Իրանի կառավարչի պաշտոնը: Շուրջ երկու տասնամյակ տևած հարաբերական խաղաղության ժամանակաշրջանն ավարտվում է 1779թ-ին Քարիմ խան Զանդի մահից հետո: Իրանը կրկին դառնում է արյունահեղ պայքարի և ներքին խռովությունների թատերաբեմ: Քարիմ խանի մահից հետո Իրանի հյուսիսային շրջաններն անցնում են ղաջարական ցեղախմբի իշխանություն տակ: Ղաջարների առաջնորդն էր Աղա Մոհամմադ խանը: Հենց նա էր գլխավորում պայքարը Զանդերի դեմ: Աղա Մոհամմադ խանը կենտրոնական Իրանի քաղաքները գրավելուց և Քերմանի ճակատամարտում Զանդերին վերջնական պարտության մատնելուց հետո իր իշխանությունն է հաստատում Իրանի գրեթե ողջ տարածքում:

Առաջին գլխի երկրորդ ենթագլուխ: <<Իրանի դերը միջազգային հարաբերություններում Աղա Մոհամմադի իշխանության տարիներին>>: Նկարագրված են Աղա Մոհամմադ խանի արշավանքները և վերջինիս թագադրումն ու իշխանության կարճատև շրջանը: Իր իշխանությունն Իրանում հաստատելուց հետո Աղա Մոհամմադ խանը շարունակում է նվաճողական արշավանքներ կատարել դեպի հարևան երկրներ՝ ցանկանալով Իրանին վերադարձնել երբեմնի փառքը և ստեղծել հզոր տերություն: Այդ նպատակին հասնելու առաջին խոչընդոտը Վրաստանն էր, որը Սեֆյանների օրոք Իրանի մասն էր կազմել, սակայն իրանական պետության թուլացման շրջանում ձեռք էր բերել փաստացի անկախություն:

1783թ-ին Հերակլ 2-րդի նախաձեռնությամբ կնքվել էր Գեորգիեվյան դաշնագիրը, ըստ որի Վրաստանը մասնակիորեն հրաժարվում էր ինքնուրույն արտաքին քաղաքականությունից և ընդունում էր Ռուսաստանի գերիշխանությունը[20]: Հենց այս ժամանակից էլ հարաբերությունները Ռուսաստանի հետ լարված բնույթ են ստանում: Հատկանշական է այն հանգամանքը, որ նախքան արշավելը դեպի Անդրկովկաս և Վրաստան, Աղա Մոհամմադ խանը նամակներ է ուղարկում անդրկովկասյան խաներին և Հերակլ 2-րդին և պահանջում է ընդունել իր գերիշխանությունը: Ստանալով Հերակլ 2-րդի մերժումը՝ Աղա Մոհամմադ խանը արշավում է դեպի Վրաստան և սեպտեմբերին պաշարում է Թիֆլիսը: Քաղաքը գրավելուց հետո այն գրեթե ամբողջությամբ ավերվում է, բնակչության մեծ մասը սպանվում է, մնացածն էլ՝ գերեվարվում: Վերադառնալով այս արշավանքից՝1796թ-ի մարտին Աղա Մոհամմադը թագադրվում է որպես Իրանի շահ և պաշտոնապես հիմնադրում է Ղաջարական դինաստիան:

1796թ-ին իրանական բանակը Աղա Մոհամմադ շահի գլխավորությամբ շարժվում է դեպի Խորասան և գրավում է Մաշհադը: Այս արշավանքի ընթացքում իրանական զորքը հարձակումներ է կատարում թուրքմենական ցեղերի վրա և ամենուրեք մեծ ավերածություններ է գործում: Ոգևորված իր հաղթանակներով՝ Աղա Մոհամմադ շահը 1797թ-ին նոր արշավանք է ձեռնարկում դեպի Վրաստան՝ նախապես գրավելով Ղարաբաղը: Սակայն այս արշավանքն անավարտ է մնում, քանի որ 1797թ-ի հունիսին շահը սպանվում է իր իսկ ծառաների ձեռքով:

Աղա Մոհամմադ շահի իշխանության տարիներին Իրանի վարած արտաքին քաղաքականության մասին խոսելիս պետք է նշենք, որ իրանական պետությունը տակավին կազմավորման փուլում էր: Աղա Մոհամմադը շատ կարճ իշխեց, այդ տարիներն էլ անցկացրեց արշավանքների և ճակատամարտերի մեջ: Ամեն դեպքում, հարկ է նշել, որ Աղա Մոհամմադ շահն ուներ ընդգծված հակառուսական դիրքորոշում, ինչն էլ հետագայում արտահայտվեց նաև Ֆաթհ Ալի շահի իշխանության տարիներին: Անդրադառնալով Աղա Մոհամմադի վարած արտաքին քաղաքականությանը՝ նշել ենք նաև նրա դիրքորոշումը Հայաստանի վերաբերյալ: Գիտակցելով հայոց եկեղեցու դերն ու նշանակությունը՝ դեռևս 1790թ-ին, երբ պայքարը հանուն իշխանության շարունակվում էր Ղաջարների և Զանդերի միջև, Աղա Մոհամմադ խանը ուղերձ է հղում հայոց կաթողիկոսին, որտեղ նշում է Էջմիածինը և Օշականը ամեն տեսակի պետական հարկերից ազատելու մասին[21]: Միրաշահելու այս դիրքորոշումը շարունակվում է նաև հետագայում:

---

[20] Н. С. Киняпина, Кавказ и Средняя Азия во внешней политике России, Москва, 1984, стр. 49-51.

[21] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 512:

Առաջին գլխի երրորդ ենթագլուխ: <<Միջազգային իրադրությունը Ֆաթհ Ալի շահի իշխանության առաջին տարիներին և ռուս-պարսկական պատերազմի սկիզբը>>: Այս ենթագլուխը վերաբերում է Ֆաթհ Ալի շահի իշխանության առաջին շրջանին: Աղա Մոհամմադ շահի սպանությունից հետո սկսված կարճատև գահակալական պայքարի արդյունքում Իրանի շահ է հռչակվում Ֆաթհ Ալի խանը: Հենց այս շրջանում էլ Իրանը հայտնվում է եվրոպական տերությունների հակամարտության կենտրոնում: Անգլիան և Ֆրանսիան, պայքարելով միմյանց դեմ, լարված են պահում նաև Իրանի հարաբերությունները Ռուսաստանի հետ և ամեն կերպ նպաստում են ռուս-պարսկական պատերազմի հրահրմանը:

Դեռևս 1796թ-ի հուլիսին Իրան են այցելում ֆրանսիական գործակալներ Օլիվիեն և Բրյուգերը, որոնք նպատակ ունեին վերականգնել ֆրանս-իրանական հարաբերությունները: Թեև ֆրանսիացիներին չի հաջողվում հանդիպել Աղա Մոհամմադ շահին, սակայն այս այցելության արդյունքում նրանք համապարփակ տեղեկություններ են հավաքում Իրանի վերաբերյալ: Ֆրանսիայի հետաքրքրություններն արևելքում և մասնավորապես Իրանում էլ ավելի են կարևորվում Նապոլեոնի իշխանության օրոք: Նա ցանկանում էր արշավել Հնդկաստան և իր ծրագրերում առանցքային տեղ էր հատկացնում Իրանին: Բնականաբար, ֆրանսիական ծրագրերը չէին կարող աննկատ մնալ Անգլիայի համար: 1800թ-ին Իրան է ժամանում Արևելահնդկական ընկերության ներկայացուցիչ Ջոն Մալքոլմը, որի բանակցություններն Իրանի ղեկավարության հետ ավարտվում են 1801թ-ի հունվարին՝ անգլո-իրանական քաղաքական և առևտրային պայմանագրերի կնքմամբ[22]:

Միևնույն ժամանակ Իրանի հարաբերությունները Ռուսաստանի հետ խիստ լարված բնույթ էին կրում: Պատերազմն անխուսափելի է դառնում, երբ անգլո-իրանական պայմանագրերի կնքմանը հաջորդում է Ալեքսանդր 1-ինի 1801թ-ի սեպտեմբերի 12(24)-ի հռչակագիրը, որով Վրաստանը պաշտոնապես միացվում էր Ռուսաստանին[23]: Հարկ է նշել, որ Նապոլեոնը նույնպես քայլեր է ձեռնարկում Իրանում հակառուսական դիրքորոշումն ամրապնդելու համար և այդ նպատակով Իրան է ուղարկում Դավիթ Մելիք Շահնազարյանին:

Գլուխ երկրորդ: ***<<Իրանի արտաքին քաղաքականությունը 1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմի շրջանում>>***: Երկրորդ գլուխը բաժանված է չորս ենթագլխի և ամփոփում է 1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակաշրջանը: Այս գլխում առավելապես փորձել ենք

---

[22] А.Р. Иоаннисян, Присоединение Закавказья к России, Ереван, 1958, стр. 45-47.

[23] Внешняя политика России XIX-начала XX века, том 1, Москва, 1960, док. 19, стр. 93-94.

ներկայացնել Ֆրանսիայի և Անգլիայի մղած դիվանագիտական պայքարն Իրանում, ինչպես նաև վերլուծության ենթարկել Իրանի կնքած միջազգային պայմանագրերը և խուսավարելու արտաքին քաղաքականությունը:

Երկրորդ գլխի առաջին ենթագլուխ: <<Անգլո-ֆրանսիական պայքարն Իրանում ռուս-պարսկական պատերազմի առաջին շրջանում>>: Այստեղ ներկայացվում է Իրանի արտաքին քաղաքականությունը և անգլո-ֆրանսիական դիվանագիտական պայքարն Իրանում: 1804թ-ի մայիսին Իրանը պահանջում է Ռուսաստանից դուրս բերել զորքերը Վրաստանից, հակառակ դեպքում սպառնում է դիմել ռազմական գործողությունների[24]: Հունիսին սկսվում է ռուս-պարսկական պատերազմը: Ֆաթհ Ալի շահը պատերազմի առաջին շրջանում հույսը դրել էր անգլիական օգնության վրա: Սակայն, երբ պարզ է դառնում, որ Անգլիան չի շտապում գործնական օգնություն ցուցաբերել, շահը փոխում է մարտավարությունը և ակտիվացնում է շփումները Ֆրանսիայի հետ: 1805թ-ին Նապոլեոնը Իրան է ուղարկում ֆրանսիացի սպա Ամադեյ Ժոբերին, որը միայն հաջորդ տարի է հասնում Թեհրան: Ժոբերը ներկայացնում է Նապոլեոնի ծրագրերը և խոստանում է օգնություն ցուցաբերել Ռուսաստանի դեմ մղվող պատերազմում: Ֆաթհ Ալի շահն ընդունում է ֆրանսիական առաջարկները, սակայն չի շտապում որևէ պայմանագիր կնքել:

1806թ-ի ամռանը կրած պարտություններից հետո, Ֆաթհ Ալի շահը զինադադար է խնդրում: Ցանկանալով դաշինք կնքել Թուրքիայի հետ՝ շահը Կոստանդնուպոլիս է ուղարկում Միրզա Մոհամմադ Ռեզա խանի գլխավորած պատվիրակությունը: Այս պատվիրակությունը Ժոբերի ուղեկցությամբ Թուրքիայից ուղևորվում է Եվրոպա: 1807թ-ի մայիսի 4-ին Ֆինկենշտեյնում կնքվում է ֆրանս-իրանական պայմանագիրը, որն ուղղված էր Անգլիայի և Ռուսաստանի դեմ: Ֆաթհ Ալի շահը հույս ուներ այս դաշինքի միջոցով հասնել հաղթանակի ռուս-պարսկական պատերազմում, սակայն հուլիսին կնքված Տիլզիթի հաշտությունը Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև, փաստորեն կասեցնում են Ֆինկենշտեյնի պայմանագիրը:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլուխ: <<Գարդանի դիվանագիտական առաքելությունը Իրան>>: Ենթագլուխն ամփոփում է Գարդանի ծավալած գործունեությունն Իրանում: Ժամանելով Թեհրան 1807թ-ի դեկտեմբերի սկզբին՝ Գարդանի ղեկավարած բազմանդամ պատվիրակությունը բուռն գործունեություն է ծավալում: Առաջին հերթին Գարդանին հաջողվում է նոր պայմանագիր կնքել Իրանի հետ, որը բացառիկ իրավունքներ էր շնորհում Ֆրանսիային: Ֆրանսիական ռազմական մասնագետները սկսում են վերապատրաստել Աբբաս Միրզայի բանակը, զուգահեռաբար

[24] Акты, собранные Кавказской археографической комиссией, том 2, Тифлись, 1868, стр. 807-808.

հետախուզական լայնածավալ աշխատանք են կատարում: Ֆրանսիացի ռազմական ինժեներները ամրացնում են Երևանի բերդը: Իրանի տարածքում կազմակերպվում է զենքի արտադրություն, հիմնվում են մետաղաձուլարաններ: Այսպիսով, Ֆրանսիան, անտեսելով Տիլզիթի հաշտությունը, շարունակում էր գործել Ռուսաստանի դեմ: Ավելին, Գարդանը ջանքեր է գործադրում նաև թուրք-իրանական հակառուսական դաշինք ստեղծելու ուղղությամբ:

Ի վերջո, Գարդանի գլխավորած ռազմական առաքելությունը դադարեցնում է իր գործունեությունը, երբ Անգլիայի դեսպան Հարֆորդ Ջոնսի պատվիրակությունը ժամանում է Թեհրան:

Երկրորդ գլխի երրորդ ենթագլուխ: <<1809թ-ի և 1812թ-ի անգլո-իրանական պայմանագրերը>>: Ենթագլխում վերլուծության են ենթարկվում վերոնշյալ անգլո-իրանական պայմանագրերը: Ներկայացված է ֆրանս-իրանական դիվանագիտական հարաբերությունների դադարեցումն ու անգլո-ֆրանսիական պայքարն Իրանում: Գարդանի պատվիրակության որոշ անդամներ Թեհրանից հեռանալուց հետո ապաստանում են Ատրպատականում՝ Աբբաս Միրզայի մոտ: Նրանք չեն շտապում հեռանալ Իրանից, մանավանդ, որ իրանական կողմն էլ դեմ չէր վերջիններիս ներկայությանը: Միայն Ջոնսի սպառնալիքներից և հետապնդումներից հետո, ֆրանսիացիները ստիպված են լինում հեռանալ:

1809թ-ի և 1812թ-ի անգլո-իրանական պայմանագրերի վերլուծությունը ապացուցում է Անգլիայի դավադիր արտաքին քաղաքականությունն ուղղված Ռուսաստանի դեմ: Անգլիան, լինելով Ռուսաստանի դաշնակիցը Նապոլեոնի դեմ պայքարում, Իրանում ամբողջովին հակառուսական քաղաքականություն էր վարում: 1809թ-ի նախնական պայմանագիրը հնարավորություն էր տալիս Անգլիային ֆինանսավորել Իրանին և միջամտել ռուս-պարսկական հարաբերություններին: Այս պայմանագիրը կնքելուց հետո Ջոնսը ակտիվ գործունեություն է ծավալում Ատրպատականում: Նա համոզում է Աբբաս Միրզային փոխել մարտավարությունը և լայնածավալ գրոհները փոխարինել փոքրաթիվ ջոկատների հարձակումներով: Բացի վերը նշված գործողություններից Ջոնսը ցանկանում էր ստեղծել թուրք-իրանական դաշինք՝ ուղղված Ռուսաստանի դեմ[25]:

1812թ-ին Ջոնսին փոխարինում է Օուզլին, որն էլ կնքում է նոր անգլո-իրանական պայմանագիրը: Այն հիմնականում կրկնում էր 1809թ-ի պայմանագրի կետերը և ուղղված էր Ռուսաստանի դեմ: Ըստ էության, այս պայմանագիրը նպաստում է պատերազմի շարունակմանը:

[25] Harford Jones, An account of the Transactions of His Majesty's, London, 1834, p. 273-274.

Երկրորդ գլխի չորրորդ ենթագլուխ: <<Պատերազմի ավարտը և Գյուլիստանի հաշտությունը>>: 1812թ-ին Ռուսաստանը ցանկանում էր հաշտություն կնքել ինչպես Թուրքիայի, այնպես էլ Իրանի հետ, որ կարողանա կենտրոնացնել ուժերը Ֆրանսիայի հետ դժվարին պատերազմում: 1812թ-ի մայիսին Բուխարեստում կնքվում է հաշտություն Թուրքիայի և Ռուսաստանի միջև, ինչը կարող էր դրական ազդեցություն ունենալ նաև Իրանի հետ բանակցություններում, եթե տեղի չունենար Նապոլեոնի զորքերի ներխուժումը Ռուսաստան: Այս նույն ժամանակաշրջանում ապստամբություն է բռնկվում Կախեթիայում: Անգլիական միջամտությունը նույնպես անհնարին էր դարձնում խաղաղության կնքումը: Միայն 1812թ-ի աշնանը ռուսները կարողանում են կոտրել Նապոլեոնի բանակի դիմադրությունը և ստիպել վերջինիս նահանջել: Կենտրոնացնելով ուժերը կովկասյան ճակատում՝ ռուսները մի քանի վճռական հաղթանակներ են տանում նախ Ասլանդուզում, ապա Լենքորանում: Թեև Իրանի ղեկավարությունը ցանկանում էր 1813թ-ի սկզբին նոր զորահավաք անցկացնել և հարձակվել, այնուամենայնիվ, նրանք հասկանում են, որ պատերազմի հետագա ընթացքն էլ ավելի կործանարար կարող է լինել և կրկին վերսկսում են բանակցությունները:

1813թ-ի հոկտեմբերի 12(24)-ին Ղարաբաղի Գյուլիստան գյուղում կնքվում է հաշտության պայմանագիրը Իրանի և Ռուսաստանի միջև, որով վերջ էր դրվում ինը տարի տևած ռուս-պարսկական պատերազմին[26]: Այս պայմանագրով Իրանը ճանաչում էր Ռուսաստանի իրավունքները Ղարաբաղի, Գյանջայի, Շաքիի, Շիրվանի, Դերբենտի, Ղուբայի, Բաքվի և Թալիշի խանությունների վրա: Սակայն պայմանագրով վերջնական լուծում չստացավ սահմանների հարցը, որը պետք է որոշվեր հետագայում:

Գլուխ երրորդ: ***<<Իրանի արտաքին քաղաքականությունը 1813-1833թթ.>>:*** Երրորդ գլուխն ընդգրկում է Գյուլիստանի հաշտությունից մինչև 1833թ-ի Հերաթի արշավանքն ընկած ժամանակաշրջանը: Այս ժամանակահատվածն անշուշտ հանդիսանում է 19-րդ դարի առաջին կեսի Իրանի պատմության ամենաբարդ, միևնույն ժամանակ հետաքրքրական շրջաններից մեկը: Երրորդ գլուխը բաժանված է չորս ենթագլխի:

Երրորդ գլխի առաջին ենթագլուխ: <<Գյուլիստանի պայմանագրի վերանայման փորձերը 1813-1818թթ.>>: 1814թ-ին Անգլիային հաջողվում է Իրանի հետ կնքել նոր պայմանագիր[27]: Այս անհավասար պայմանագրով Իրանը Անգլիային էր ենթարկեցնում իր արտաքին քաղաքականությունը, քանի որ պարտավորվում էր հարաբերություններ պահպանել միայն այն

---

[26] Հ. Գ. Ազատյան, Բախտորոշ պայմանագրեր, Երևան, 2002, էջ 26-31:

[27] Л. С. Семенов, Россия и международные отношения на среднем востоке в 20-е годы XIX века, Ленинград, 1963, стр. 24-25.

երկրների հետ, որոնք Անգլիայի հետ ունեին բարեկամական հարաբերություններ: Այն գաղտնի էր և ամբողջովին դեմ էր Ռուսաստանի շահերին: Ռուս-պարսկական պատերազմում կրած պարտությունից հետո Ֆաթհ Ալի շահը փորձում էր հասնել Գյուլիստանի պայմանագրի վերանայմանը: Այդ նպատակով Պետերբուրգ է ուղարկվում Միրզա Աբոլ Հասան խանը, որը դիմում է Ռուսաստանի կայսրին որոշ տարածքներ զիջել Իրանին: Ալեքսանդր 1-ինը մերժում է և հայտարարում է, որ հետագա խնդիրները պարզելու համար Իրան է ուղարկելու իր պատվիրակներին: 1817թ-ին Իրան է ժամանում գեներալ Երմոլովի պատվիրակությունը: Նա անդրդվելի կեցվածք է դրսևորում բանակցությունների ողջ ընթացքում և հրաժարվում է գնալ որևէ տարածքային զիջման:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլուխ: <<Իրանի արտաքին քաղաքականությունը 1818-1825թթ.>>: Ենթագլխում նկարագրված է Մոհեբ Ալի խանի դիվանագիտական առաքելությունը Թուրքիա և Միրզա Աբոլ Հասան խանի ուղևորությունը Եվրոպա:

Թուրք–իրանական դաշինքի ծրագիրը չի կայանում, քանի որ թուրքական կողմը մերժում է այն, ձևականորեն պատճառաբանելով, թե երկկողմ հարաբերությունները կառուցված են իսլամի սրբազան ավանդույթների հիման վրա և կարիք չկա որևէ դաշինք կնքել[28]: Իրականում Թուրքիայի և Իրանի միջև գոյություն ունեին բազմաթիվ հակասություններ, որոնցից առանցքային էին տարածքային խնդիրները: Ֆաթհ Ալի Շահը Լոնդոն է ուղարկում Միրզա Աբոլ Հասան խանին, որին հանձնարարված էր ստանալ Թեհրանի պայմանագրով նախատեսված անգլիական օգնությունը: 1819թ-ից գտնվելով Լոնդոնում՝ Իրանի դեսպանին չի հաջողվում լուծել իր առջև դրված խնդիրները: Դրա պատճառը նախևառաջ Լոնդոնում Ռուսաստանի դեսպան Լիվենի ակտիվ գործունեությունն էր, որը կոչ էր արել Անգլիային որևէ քայլ չձեռնարկել, որը դեմ կլիներ Ռուսաստանի շահերին[29]:

Այս շրջանում լարվում են նաև անգլո-իրանական հարաբերությունները: Անգլիայի վրա ճնշում գործադրելու նպատակով Իրանը պատերազմ է հայտարարում Թուրքիային 1821թ-ի աշնանը: Իրանական վերնախավը ցանկանում էր թուրք-իրանական պատերազմի արդյունքում նոր տարածքներ գրավել և փոխհատուցել անդրկովկասյան տարածքների կորուստները: 1821-1823թթ. պատերազմի ընթացքում ավելի ցայտուն են դառնում Իրանի իրական նպատակները. ազդել Անգլիայի վրա և օգնություն ստանալ Ռուսաստանի դեմ պատերազմելու համար: 1823թ-ի հուլիսի 28-ին Էրզրումում կնքվում է հաշտություն Իրանի և Թուրքիայի միջև: Իրանը Թուրքիային է վերադարձնում Էրջիշ, Ախլաթ, Բիթլիս, Բայազետ,

---

[28] АКАК, том 6, ч.-2, стр. 189-190.

[29] АВПР, МИД, Канцелярия, док. 6891, л. 284-286.

Սուլեյմանիե, Քիրքուռ և Մոսուլ քաղաքները: Էրզրումի հաշտությունից հետո անգլո-իրանական հարաբերությունները կարգավորվում են: Իրանում կրկին մեծանում է անգլիական ազդեցությունը: Անգլիան շարունակ լարված է պահում ռուս-պարսկական հարաբերությունները և տապալում է սահմանի որոշման բանակցությունները:

Երրորդ գլխի երրորդ ենթագլուխ: <<1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմը և Թուրքմենչայի հաշտությունը>>: 1826թ-ի հունվարին Նիկոլայ 1-ին կայսրը հանձնարարում է իշխան Մենշիկովին ուղևորվել Իրան՝ Ֆաթհ Ալի շահի հետ բանակցելու համար: Նա պետք է համաձայնագիր կնքեր սահմանային վեճերի կարգավորման վերաբերյալ: Միաժամանակ Իրան է ժամանում նաև Անգլիայի նորանշանակ դեսպան Մաքդոնալդը: Մենշիկովի բանակցություններն Աբբաս Միրզայի հետ տապալվում են: Հունիսի 22-ին Մենշիկովը ընդունելության է արժանանում շահի մոտ: Հենց նույն օրը իրանական կառավարության գաղտնի ժողովը որոշում է կայացնում Ռուսաստանի դեմ պատերազմելու վերաբերյալ:

Պատերազմի սկզբնական շրջանում Անգլիայի արտաքին գործերի նախարար Կաննինգը պաշտոնական գրություն է ուղարկում Լոնդոնում Ռուսաստանի դեսպան Լիվենին, որտեղ նշում է, որ Իրանը սկսեց ռազմական գործողություններն առանց հաշվի առնելու այն մեծ ջանքերը, որ գործադրում էր Անգլիան հանուն խաղաղության[30]: Այսպիսի կեղծ հայտարարություններով Անգլիան դատապարտում էր պատերազմը, սակայն իրականում ցանկանում էր հրահրել պատերազմ Իրանի և Ռուսաստանի միջև:

Ռուս-պարսկական երկրորդ պատերազմը սկսվում է 1826թ-ի հուլիսի 16-ին: Պարսկական զորքերի անակնկալ հարձակումը ստիպում է ռուսներին նահանջել, սակայն արդեն սեպտեմբերի կեսերին ռուսական բանակը հակահարված է հասցնում պարսիկներին և գրավում է Գյանջան, Բաքուն, Լենքորանը և այլ շրջաններ: Ռազմական գործողությունները դադարում են մինչև 1827թ-ի ապրիլ: Զարգացնելով հաջողությունները՝ Պասկևիչը շարժվում է դեպի հարավ և ի պատասխան իրանական կողմի առաջարկներին հայտարարում է, որ զինադադար կկնքվի միայն այն պարագայում, եթե սահմանը հաստատվի Արաքս գետով և Իրանը վճարի ռազմատուգանք: 1827թ-ի սեպտեմբերին ռուսները գրավում են Սարդարապատը և կենտրոնացնում են ուժերը Երևանը գրավելու համար: Մի քանի օր տևած ռմբակոծությունից հետո, հոկտեմբերի 1-ին ռուսները գրավում են Երևանը: Երևանի գրավումից հետո ռուսական բանակը անցնում է Արաքսը և հոկտեմբերի 13-ին գրավում է Թավրիզը: Անգլիան խիստ անհանգստացած էր ռուսական բանակի առաջխաղացմամբ և փորձում էր միջամտել բանակցությունների ընթացքին: Պասկևիչը պաշտոնապես մերժում է

[30] АВПР, МИД, Канцелярия, док. 6958, л. 28.

Մաքդոնալդի միջնորդությունները և նշում է, որ ռուսական զորքերի հետագա առաջխաղացումն էլ ավելի ծանր պայմաններ կպարտադրի Իրանին:

Փետրվարի 10(22)-ին Թուրքմենչայում կնքվում է հաշտության պայմանագիրը Ռուսաստանի և Իրանի միջև[31]: Այս պայմանագրով Երևանի և Նախիջևանի խանություններն անցնում են Ռուսաստանի տիրապետության տակ և սահմանը հաստատվում է Արաքս գետով: Իրանը պարտավորվում էր վճարել 20 միլիոն ռուբլի ռազմատուգանք: Ռուսաստանը բացառիկ իրավունքներ է ստանում առևտրի բնագավառում, ինչպես նաև նրան է վերապահվում Կասպից ծովում ռազմական նավատորմ պահելու իրավունքը: Այս պայմանագիրն ամրապնդեց Ռուսաստանի դիրքերը հատկապես Իրանի հյուսիսային շրջաններում:

Երրորդ գլխի չորրորդ ենթագլուխ: <<Իրանի արտաքին քաղաքականությունը Ֆաթհ Ալի շահի իշխանության վերջին տարիներին>>: 1829թ-ին Ռուսաստանի դեսպանության ավերումը և ռուսական դեսպան Գրիբոյեդովի սպանությունը Իրանը կանգնեցնում են երրորդ ռուս-պարսկական պատերազմի վտանգի առջև: Պատերազմից հնարավոր է լինում խուսափել միայն այն ժամանակ, երբ Պետերբուրգ է ժամանում Ֆաթհ Ալի շահի ուղարկած պատվիրակությունը, որը գլխավորում էր նրա թոռը՝ Խոսրով Միրզան: Այս պատվիրակությունը պետք է հայցեր ռուսական իշխանությունների ներումը: Նիկոլայ 1-ինը ընդունում է իրանական պատվիրակությանը և դիվանագիտական հարաբերությունները երկու երկների միջև կարգավորվում են: Ռուսաստանը չի ցանկանում վտանգել Թուրքմենչայի պայմանագրով ձեռք բերած իր քաղաքական և տնտեսական ձեռքբերումներն Իրանում և այդ գործոնները, փաստորեն, ավելի են կարևորվում, քան պետության հեղինակությունը[32]: Պակաս կարևոր գործոն չի հանդիսանում այն, որ ռուսները խուսափում էին երկու ճակատով պատերազմելու հեռանկարից:

Ֆաթհ Ալի շահն իր իշխանության վերջին շրջանում ստիպված էր արշավանքներ կատարել Իրանի տարբեր շրջաններում ապստամբած խաների դեմ: Պատերազմում կրած պարտությունից հետո Իրանում առաջ էին եկել մի շարք խնդիրներ, որոնց լուծումը կարևոր էր ինչպես Իրանի ներքին, այնպես էլ՝ արտաքին քաղաքականության համար: Երկարատև պատերազմները և տարածքային կորուստները թուլացրել էին երկիրը, ինչի հետևանքով օտարերկրյա ազդեցությունն Իրանում ավելի մեծացավ: 1833թ-ին իրանական բանակը փորձում է գրավել Հերաթը, սակայն այս արշավանքն անավարտ է մնում Աբբաս Միրայի մահվան պատճառով:

---

[31] Հ. Գ. Ազատյան, Բախտորոշ պայմանագրեր, Երևան, 2002, էջ 32-38:

[32] С. А. Маркарян, Гибель русской миссии в Иране и убийство А. С. Грибоедова, “Грибоедовские чтения” вып. 1, Ереван, 2009, стр.109-122.

Գլուխ չորրորդ: ***<<Օտարերկրյա ազդեցության մեծացումը Մոհամմադ շահի իշխանության օրոք>>***: Այս գլխում ներկայացված է Իրանի արտաքին քաղաքականությունը Մոհամմադ շահի իշխանության տարիներին: Այն բաժանված է երեք ենթագլխի, որտեղ ներկայացված են Իրանի հարաբերությունները Անգլիայի և Ռուսաստանի, Թուրքիայի և Ֆրանսիայի հետ:

Չորրորդ գլխի առաջին ենթագլուխ: <<Մոհամմադ շահի իշխանության գալը և 1837-1838թթ. Հերաթի կոնֆլիկտը>>: 1833թ-ին մահանում է Աբբաս Միրզան, ով հնդիսանում էր Իրանի գահաժառանգը: 1834թ-ին մահանում է նաև Ֆաթհ Ալի շահը: Նրա մահից հետո սկսվում է գահակալական պայքարը Աբբաս Միրզայի որդու՝ Մոհամմադ Միրզայի և Ֆաթհ Ալի շահի մյուս զավակների միջև: Անգլիայի և Ռուսաստանի օգնությամբ Իրանի շահ է հռչակվում Մոհամմադ Միրզան:

1837թ-ին Մոհամմադ շահը, ցանկանալով գրավել Հերաթը, դուրս է գալիս արշավանքի: Նա գերագնահատել էր իր հնարավորությունները: Իրանական այս արշավանքը լավ առիթ էր Անգլիայի համար, որ միջամտի Իրանի արտաքին քաղաքականությանը: Եթե 19-րդ դարի սկզբին Անգլիան խրախուսում էր Իրանի արշավանքները դեպի Աֆղանստան, ապա 19-րդ դարի երկրորդ քառորդում Անգլիան վտանգավոր էր համարում Իրանի նկրտումներն այդ հարցում: Թուրքմենչայի պայմանագրով Ռուսաստանը բացառիկ իրավունքներ էր ստացել Իրանում: Ռուսաստանի դիրքերի ամրապնդումը խիստ անհանգստություն էր պատճառում Անգլիային: Պատահական չէ, որ 1837թ-ի Հերաթի արշավանքն Անգլիան համարում է իր հնդկական տիրույթների դեմ ուղղված գործողություն և մեղադրում է Ռուսաստանին՝ Իրանին աջակցելու համար: Կարելի է ասել, որ Հերաթի կոնֆլիկտի ընթացքում դրսևորվում են անգլո-ռուսական հակասությունները: Անշուշտ Ռուսաստանն ուներ կայսերական նկրտումներ և ձգտում էր տարածել իր գերիշխանությունն ու ազդեցության գոտիները, սակայն Իրանում և Միջին Ասիայում Ռուսաստանն առավելապես հետապնդում էր տնտեսական նպատակներ: Կարելի է ասել, որ Հնդկաստանին սպառնացող վտանգը Անգլիայի քարոզչական հնարքներից մեկն էր:

Անգլիան խզում է դիվանագիտական հարաբերություններն Իրանի հետ և պահանջում է դուրս բերել իրանական զորքերը Հերաթի տարածքից: Իրանի վրա գործադրվում էր եռակողմ ճնշում՝ տնտեսական, քաղաքական և ռազմական: Հայտնվելով Անգլիայի ճնշման տակ՝ Մոհամմադ շահը ստիպված է լինում դադարեցնել պաշարումը և կատարել Անգլիայի պահանջները: 1941թ-ին կնքվում է նոր անգլո-իրանական պայմանագիր, որով անգլիացի առևտրականներին բացառիկ արտոնություններ էին շնորհվում Իրանում:

Չորրորդ գլխի երկրորդ ենթագլուխ: <<Թուրք-իրանական հարաբերությունները և Էրզրումի կոնֆերանսը>>: Իրանի հարաբերությունները Թուրքիայի հետ 19-րդ դարի առաջին կեսին մշտապես լարված բնույթ էին կրում, ինչի հիմնական պատճառը երկու երկրների սահմանային գոտում տեղի ունեցող ընդհարումներն էին: Տարածքային խնդիրներից բացի Իրանի և Թուրքիայի միջև առկա էին շիա-սունի հակասությունները[33]: Օսմանյան իշխանությունները հաճախ օգտվում էին այն հանգամանքից, որ շիական գլխավոր սրբավայրերը գտնվում են Թուրքիայի տարածքում և հաճախ խոչընդոտներ էին ստեղծում ուխտավորների համար: Մոհամմադ շահի իշխանության առաջին տարիներին տեղի են ունենում մի շարք սահմանային կոնֆլիկտներ, որոնք քիչ է մնում վերածվեն պատերազմի: Բաղդադի Ալի Ռեզա փաշան գրավում է Խորրեմշահրը և կոտորում է շիա բնակչությանը: 1842թ-ին իրանական զորքը գրավում է Քերբալան: Թուրք-իրանական պատերազմից հնարավոր է լինում խուսափել միայն Անգլիայի և Ռուսաստանի միջամտության շնորհիվ: 1843թ-ին Էրզրումում հրավիրվում է քառակողմ կոնֆերանս, որի աշխատանքները տևում են 4 տարի և վերջնական համաձայնագիր է կնքվում միայն 1847թ-ին:

Չորրորդ գլխի երրորդ ենթագլուխ: <<Իրանի և Ֆրանսիայի հարաբերությունները Մոհամմադ շահի իշխանության տարիներին>>: Այս շրջանում Իրանը փորձում էր Ֆրանսիայի միջոցով պահպանել հավասարակշռությունն Անգլիայի և Ռուսաստանի միջև, սակայն այդ խնդիրը բավականին դժվար իրագործելի էր, քանի որ Ռուսաստանի և Անգլիայի օրինակով, Ֆրանսիան էլ էր ձգտում Իրանի հետ կնքել անհավասար տնտեսական և քաղաքական պայմանագրեր և ստանալ արտոնյալ իրավունքներ ու մեծացնել իր ազդեցությունն Իրանում: Այնուամենայնիվ, Իրանի ղեկավարությունը, ի դեմս սադրազամ Հաջի Աղասու, ձգտում էր վերականգնել ֆրանս-իրանական հարաբերությունները և այդ նպատակով Ֆրանսիա է ուղարկում Հոսեյն խանի պատվիրակությունը: Հաջի Աղասին ֆրանսիական իշխանություններից խնդրում էր Իրան ուղարկել մի շարք մասնագետների՝ թղթի և մոմերի արտադրության, ոսկերիչների, ապակեգործների, երկրաբանների, լեռնարդյունաբերության մասնագետների և այլն: Ֆրանսիան նույնպես ցանկանում է վերականգնել հարաբերությունները և 1839թ-ին պատասխան այցով Իրան է ժամանում կոմս դը Սասիի պատվիրակությունը: Սակայն Ֆրանսիային այլևս չի հաջողվում վերականգնել իր դիրքերն Իրանում: Անգլիական և ռուսական ազդեցությունն այժմ չափազանց ուժեղ էր Իրանում և այդ պատճառով ֆրանսիական ներկայացուցչությունների բացման հարցը վերջնական լուծում չի ստանում:

---

[33] А. М. Багбан, Ирано-турецкие пограничные конфликты во второй четверти XIX века, Душанбе, 1973, стр. 38-40.

Եզրակացություն: Ուսումնասիրելով 19-րդ դարի առաջին կեսի Իրանի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները, Իրանի դերը միջազգային հարաբերություններում, նրա հետապնդած նպատակները եվրոպական տերությունների հետ ունեցած հարաբերություններում՝ կատարվել է ատենախոսության հիմնական եզրակացությունների ամփոփում, որի արդյունքում կարող ենք նշել հետևյալ հիմնական եզրահանգումները.

. Ղաջարները, չնայած դժվարություններին և չափազանց բարդ ու խճճված միջազգային հարաբերություններին, կարողացան վերահաստատել Իրանի պետականությունը և պահպանեցին Իրանի պատմական տարածքները:

. Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև խուսավարելու արտաքին քաղաքականության միջոցով Ղաջարները կարողացան խուսափել Իրանի գաղութացումից: Այս մարտավարությունը բնորոշ է այն պետություններին, որոնք միջազգային ասպարեզում գտնվում են ոչ շահավետ դիրքում և ստիպված են կառուցել իրենց արտաքին քաղաքականությունն ավելի հզոր տերությունների հետաքրքրությունները միմյանց հակադրելով:

. Իրանի միավորման ու կենտրոնական իշխանության ձևավորման ճանապարհին գլխավոր խոչընդոտներից մեկը երկրի կառավարման համակարգն էր: Այն իրենից ներկայացնում էր տիպիկ արևելյան ռազմաֆեոդալական պետություն, երբ իշխանությունը գտնվում է միայն շահական ընտանիքի ձեռքում և պետության կարևորագույն պաշտոնները վստահվում էին ցեղային, արյունակցական սկզբունքով:

. Իրանը Օսմանյան Թուրքիայի հետ ուներ խորը հակասություններ և հաճախ գտնվում էր լարված հարաբերությունների մեջ: Բացի շիա և սունի պայքարից, Իրանի և Թուրքիայի միջև մշտապես առկա էին տարածքային վեճերը: Այս պարագայում Իրանի համար անհնարին էր դառնում իսլամական գործոնն օգտագործելու հնարավորությունը՝ ի նպաստ իր արտաքին քաղաքական խնդիրների լուծման:

. Աֆղանստանի հետ հարաբերությունները նույնպես դժվար էր բարիդրացիական կոչել: Ղաջարները դեռևս իշխանության գալու շրջանում և դրանից առաջ էլ մշտապես պայքարել են աֆղանների դեմ և հավակնել են աֆղանական տարածքներին: Իրանի և Աֆղանստանի հարաբերություններում առկա լարվածությունը նաև Անգլիայի գործունեության արդյունքն էր: Անգլիան, ցանկանալով ապահովել իր հնդկական գաղութների անվտանգությունը, խոչընդոտում էր երկու երկրների մերձեցմանը:

. Իրանի շեշտադրումը ռազմական ուժի վրա և անդադար պատերազմները կովկասյան տարածաշրջանում էլ ավելի ամրապնդեցին հայերի, վրացիների և մնացած կովկասյան ազգերի շրջանում Իրանից

անջատվելու ցանկությունը և այս ազգերի մոտ ձևավորվեց ռուսական կողմնորոշումը:

. Իրանի պարտությունների հիմնական պատճառը ռազմական սխալ հաշվարկներն էին ու մարտավարության պակասը: Իրանը բազմաթիվ ցուցանիշներով մի քանի անգամ հետ էր եվրոպական երկրներից, սակայն հաշվի չէր առնում այդ հանգամանքը Ռուսաստանի դեմ պայքարում:

. Երկարատև պատերազմները և անհավասար պայմանագրերը բերում են Իրանի թուլացմանը և արդեն 19-րդ դարի 2-րդ կեսից Իրանը հետզհետե վերածվում է միջազգային քաղաքականության օբյեկտի: Իրանն այլևս երբեք չի ունենում այն փառքն ու հզորությունը, որն ունեցել էր դարեր շարունակ, երբ ամբողջովին անկախ էր, թե ներքին, թե արտաքին քաղաքականության ոլորտում և հանդիսանում էր տարածաշրջանային առաջնորդ:

. Ղաջարները, հուսալով անգլիական և ֆրանսիական օգնությանը, անհեռատես էին գտնվել, քանի որ Անգլիան, լինելով գաղութատեր երկիր, նույն ճակատագրին էր փորձելու արժանացնել Իրանին, իսկ Ֆրանսիան ցանկանում էր օգտագործել Իրանը Ռուսաստանի դեմ պայքարում: Իրանը 1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո կարող էր պահպանել կայուն տնտեսական հարաբերություններ Ռուսաստանի հետ և խուսափել 2-րդ ռուս-պարսկական պատերազմից:

. Անգլիան, հրահրելով Իրանին պատերազմել Ռուսաստանի դեմ, ցանկանում էր թուլացնել Իրանը և հետագայում անհավասար պայմաններով պայմանագրեր պարտադրել պարսից արքունիքին:

Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ գիտական աշխատություններում

1. Գևորգյան Ռաֆֆի, Դավիթ Մելիք-Շահնազարյանի դիվանագիտական առաքելություններն Իրանում 1802-1816թթ., “Orientalia” ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի դասախոսների և ասպիրանտների գիտական հոդվածների ժողովածու, Պրակ 13, Երևան, 2011, էջ 46-54:
2. Գևորգյան Ռաֆֆի, 19-րդ դարի սկզբի անգլո-իրանական պայմանագրերի հակառուսական բնույթը – Կանթեղ գիտական հոդվածների ժողովածու, 2(51), Երևան, 2012, էջ 115-122:
3. Գևորգյան Ռաֆֆի, 1837-1838թթ. Հերաթի կոնֆլիկտը ռուս-անգլիական հակասությունների համատեքստում – Օրենք և իրականություն, 4(198), Երևան, 2012, էջ 35-37:
4. Գևորգյան Ռաֆֆի, Գյուլիստանի պայմանագիրը և Իրանի արտաքին քաղաքականությունը 1813-1818թթ. - Օրենք և իրականություն, 5(199), Երևան, 2012, էջ 35-38:

Геворгян Раффи Ашотович

Внешняя политика Ирана во время первых трех правителей Каджарской династии (1796-1848гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 – "Всемирная история".

Защита состоится 17 июля 2012г., в 13.00 часов на заседании специализированного совета 006, действующего при Институте Востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Основной задачей диссертационного исследования является выявление формирования внешнеполитического курса иранского правительства в период правления первых трех Каджарских шахов (1796-1848гг.). В начале 19-го века шла дипломатическая борьба великих европейских держав (Англия, Франция, Россия) за преобладание в Иране и приобретение дополнительных экономических и политических преимуществ. По этой причине в правящих кругах Ирана сформировался принцип придерживания концепции лавирования и противопоставления интересов европейских держав для достижения своих национальных целей. Структура работы соответствует целям и основным задачам исследования и состоит из введения, четырех глав, выводов и списка использованной литературы. Во введении обосновывается актуальность исследования, а также методология диссертации.

Работа разделена на четыре главы, которые отражают важнейшие этапы внешней политики Ирана в период властвования первых трех Каджарских правителей.

Первая глава диссертации - "Основание Каджарского государства и международная ситуация в конце 18-го-начале 19-го века". В этой главе описан период со второй половины 18-го века до начала 19-го столетия.

После убийства Надир-шаха в Иране начинается борьба за престол различных племенных группировок. С этого периода активное участие за власть принимает и Каджарское племя, которое укрепляет свое влияние в северной части Ирана. В 1779 году после смерти Карим-хана Зенда в Иране снова начинается борьба между Зендами и Каджарами, которая заканчивается окончательной победой Ага Мохаммед-хана Каджара. Во время правления Ага Мохаммед-шаха иранские войска совершают захватнические походы в Закавказье. В заключительной части первой главы анализируется

международная ситуация в регионе и борьба европейских держав за укрепление влияния в Иране и приход к власти племянника Ага Мохаммеда-шаха Фатх Али-хана. В этот период обостряется ситуация в Закавказье в связи с присоединением Грузии и закавказских мусульманских ханств к России. Война с Россией становится неизбежной.

Вторая глава диссертации – "Внешняя политика Ирана во время русско-персидской войны 1804-1813гг." посвящена анализу дипломатических отношений в этот период. В главе рассмотрена дипломатическая борьба между Францией и Англией. Обе державы имели свои интересы и хотели спровоцировать войну между Россией и Ираном. Еще до начала войны в 1801 году заключается англо-иранский договор, который дает явные экономические и политические преимущества Англии. В свою очередь, Франция в лице Наполеона стремилась привлечь Иран на свою сторону и добиться открытия второго фронта против России. После подписания Финкенштейнского соглашения военная миссия генерала французской армии Гардана начинает свою деятельность в Иране. Примечателен тот факт, что Франция действовала против России даже после подписания мирного договора в Тильзите. После того как Фатх Али-шах убедился в том, что союз с Францией не дает ожидаемых результатов в войне с Россией, он меняет внешнеполитический курс на сотрудничество с Англией. В этой главе проанализированы также англо-иранские договоры 1809, 1812-го годов. Эти договоры способствовали продолжению войны. Англия стремилась ослабить Россию, влияние которой в Закавказье с конца 18-го века значительно усилилось. Однако старания Англии не увенчались успехом, так как уже в 1812 году Россия переломила ход войны с Францией и одержала победу в войне с Турцией. Благодаря этим событиям, России удалось сконцентрировать свои войска на русско-персидском фронте. Успешные атакующие действия русских войск вынуждают отступить персидские войска на исторические земли Ирана. После взятия Тавриза иранская сторона решает сесть за стол переговоров, которые заканчиваются подписанием Гюлистанского мирного договора.

Третья глава озаглавлена "Внешняя политика Ирана в 1813-1833гг.". После Гюлистанского мира влияние Англии в Иране значительно сократилось. По этой причине Англия стремилась заключить новый договор с Ираном. Этот неравноправный договор был подписан в Тегеране в 1814 году и по сути стал одним из поводов для разжигания новой войны Ирана с Россией. После подписания Гюлистанского мирного договора Фатх Али-шах не смог смириться с поражением и хотел достичь денонсации договора. Но твердая позиция русского правительства в лице генерала Ермолова окончательно сломила надежды иранской стороны на получение хотя бы части земель на Южном Кавказе. Стоит отметить, что во время "ста дней" Наполеона Фатх Али-шах

стремился возобновить отношения с Францией, однако после краха наполеоновской армии и реставрации Бурбонов планы иранского шаха не осуществились. Эти действия шаха еще раз показывают, что в иранском правительстве хотели лавировать между Францией и Англией и противопоставить их интересы. Россия тоже хотела укрепить свое положение в регионе Южного Кавказа и для этого старалась привлечь Иран на свою сторону в борьбе против Турции, но нельзя сказать, что ирано-турецкая война была результатом русских стараний: отношения между двумя странами в начале 19-го века были крайне напряженными. Основной ошибкой иранского правительства в этот период является то, что оно не осознавало всю мощь России и вступило в войну с ней, надеясь на помощь Англии. Война 1826-1828гг. окончилась сокрушительной победой русских войск и присоединением Ереванского и Нахичеванского ханства к России. Туркманчайский договор окончательно укрепил русские позиции не только в Иране, но и во всем регионе.

Заключительная глава диссертации - "Усиление внешнего влияния во время правления Мохаммад-шаха" посвящена изучению внешней политики Ирана в 1834-1848гг. Если во время правления Фатх Али-шаха и Аббас Мирзы Иран был более свободным и мог лавировать между европейскими державами, то уже во время властвования Мохаммад-шаха влияние держав (особенно Англии и России) намного усилилось. Переоценив свои силы, Мохаммад-шах решает совершить поход на Герат. Это событие становится поводом для Англии, чтобы вмешаться в ирано-афганский конфликт. Англия оценивает поход иранских войск как угрозу для своих индийских владений и требует вывода войск. Получив отказ, Англия оккупирует иранские острова в персидском заливе и разрывает дипломатические отношения. Можно сказать, что Гератский конфликт явился новым проявлением англо-русских противоречий, так как в действиях Ирана Англия обвиняла Россию. Только после подписания нового англо-иранского договора, в которой закреплялись исключительные права Англии в сфере торговли, отношения между Ираном и Англией возобновились.

Ирано-турецкие отношения в конце 30-х годов были очень напряженными. Многочисленные пограничные конфликты на ирано-турецкой границе создали военную ситуацию, которую удалось решить во время Эрзрумской конференции.

В конце правления Мохаммед-шаха Иран постепенно становится из субъекта международной политики в объект.

Gevorgyan A. Raffi

The Iranian Foreign policy during the rule of the first three sovereigns of Qajar dinasty (1796-1848)

The Dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of "World History" 07.00.02.

The Defense of the Dissertation will take place at 13.00, on July 17, 2012 at the Meeting of Specialized Council 006 acting at the Oriental Studies Institute of NAS RA. Address: 0019, Yerevan, av. Marshal Baghramyan, 24/4.

SUMMARY

The main task of PhD research is revealing the formation of the foreign policy course of the Iranian government at the period of ruling the first three Qajar shahs (1796-1848). At the beginning of the 19-th century the great European states (England, France, Russia) held diplomatic fight for predominance in Iran and acquisition of additional economic and political advantages. For this reason, the ruling circles of Iran formed the principle of sticking to the concept of maneuver and the opposing interests of the European powers to achieve their national goals. The structure of the work is within the goals and the main objectives of the study and consists of an introduction, four chapters, conclusions and bibliography. The introduction shows relevance of the study and methodology of the thesis.

The thesis is divided into four chapters, which reflect the major stages of Iran's foreign policy at the period of ruling of the first three Qajar shahs.

The first chapter of the thesis - "The foundation of the Qajar state and the international situation in the late 18th and early 19th century". This chapter describes the period from the second half of the 18th century to the early 19th century.

The struggle for the throne of the various tribal groups begins after the assassination of Nadir Shah in Iran. Starting from this period the Qajar tribe, which strengthens its influence in northern Iran, also takes the active participation of government. In 1779, after the death of Karim Khan Zend in Iran once again the struggle between the Zend and the Qajars breaks out which ends with the final victory of Agha Mohammad Khan Qajar. During the ruling of Agha Mohammad Shah Iranian troops commit aggressive campaigns in the Undercaucasus. The final

part of the first chapter analyzes the international situation in the region and the struggle of European powers for strengthening of influence in Iran and Fath Ali Khan's the nephew of Aga Mohammed Shah, coming to power. At this period the situation in Coucasus is sharpening in connection with the accession of Georgia and the Caucasus Muslim khanates to Russia. The war with Russia becomes unavoidable.

The second chapter - "Iran's foreign policy during the Russian-Persian war of 1804-1813" is devoted to the analysis of diplomatic relations in this period. The chapter discusses the diplomatic struggle between France and England. Both countries had their own interests and wanted to provoke a war between Russia and Iran. Still before the war in 1801, the Anglo-Iranian agreement was signed up, which gives the clear economic and political advantages of England. In turn, France, in the person of Napoleon tried to draw Iran on its side and to open a second front against Russia. After the signing up the Finkenshtein agreement general Gardan's military mission starts its activity in Iran. Noteworthy is the fact that France has acted against Russia, even after signing a peace treaty at Tilsit. After Fath Ali Shah was convinced that the alliance with France wouldn't give the expected results in the war with Russia, it changed the foreign policy of cooperation with Britain. This chapter also analyzes the Anglo-Iranian treaties of 1809, 1812. These agreements have contributed to the continuation of the war. England tried to weaken Russia, whose influence in the Undercaucasus since the end of the 18th century greatly increased. However, efforts of England have been unsuccessful, since in 1812 Russia has broken the course of war with France and won the war with Turkey. Due to these events Russia has managed to concentrate its forces on the Russian-Persian front. Successful attack of the Russian army forced Persian troops to retreat to the historical lands of Iran. After the capture of Tavriz the Iranians decides to start negotiation process which end up by signing of the peace treaty of Gyulistan.

The third chapter is entitled "Iran's foreign policy in 1813-1833". After the Gulistan Peace British influence in Iran has significantly declined. For this reason, Britain sought to negotiate a new treaty with Iran. This unequal treaty was signed in Tehran in 1814 and essentially became one of the reasons for fomenting a new war between Iran and Russia. After signing the peace Gulistan agreement, Fath Ali Shah was unable to accept defeat and would like to achieve denunciation of the treaty. But the firm position of the Russian government in the person of General Ermolov finally broke the hopes of the Iranian side to get at least a part of the land in the South Caucasus. It should be noted that during the "hundred days" of Napoleon Fath Ali Shah sought to renew relations with France, but after the collapse of Napoleon's army, and the Bourbon restoration plans for the Shah of Iran were not fulfilled. These actions of the Shah once again show that the Iranian government wanted to maneuver between France and England, and to oppose their interests. Russia also wanted to strengthen its position in the South Caucasus region and to this end

sought to engage Iran on its side in the fight against Turkey, but we cannot say that the Iranian-Turkish war was the result of the Russian effort: the relationship between the two countries in the early 19th century were very strained. The main mistake of the Iranian government in this period is that it was not aware of the power of Russia and came to war with her, hoping for England's help. War of 1826-1828 ended with triumphal victory of Russian troops and joining of Yerevan and Nakhichevan khanates to Russia. Turkmanchai agreement has finally strengthened the Russian positions, both in Iran and throughout the region.

The final chapter of the thesis - "Strengthening the external influence during the ruling of Mohammad Shah" devoted to the study of foreign policy of Iran in 1834-1848. During the ruling of Fath Ali Shah and Abbas Mirza, Iran was more free and able to maneuver between the European powers, now in the course of ruling of Mohammad Shah, influence of powers (especially England and Russia) became much stronger. Overestimating his forces, Mohammad Shah decides to make a trip to Herat. This event becomes the occasion for England to intervene in the Iran-Afghan conflict. England assesses the march of Iranian troops as a threat to their Indian possessions, and demands the withdrawal of troops. Having been refused, England occupied the Iranian islands in the Persian Gulf and breaks off diplomatic relations. We can say that Herat was a new expression of Anglo-Russian conflict as England blamed Russia in the actions of Iran. Relations between Iran and Britain resumed only after the signing of a new Anglo-Iranian agreement, which fixed exclusive rights of England in the field of trade.

Iranian-Turkish relations in the late 30s were very tense. Numerous frontier conflicts in the Iranian-Turkish border have created a military situation, which was solved during the Erserum conference.

At the end of the ruling of Mohammed Shah Iran is gradually becoming an object from the subject of international policy.